ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1961 Общественные науки

Ա. Մ. Աբգարյան

ՆՈՐԻՑ «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻ» ՇՈՒՐՋԸ

(Ստ. Նազարյանցի մի անտիպ գրությունը)

Մոսկվայի մարզային Պետական պատմական արխիվում, ուր երկար թափառելուց հետո տեղ գտան «Հոգևոր կառավարության Հայոց Մոսկվայի» գործերի պատառիկները, մի ուշագրավ կապոց կա՝ 16 թերթից բաղկացած։ Կապոցն ունի հետևյալ վերնագիրը՝

«Ըստ հրամանի սինոթի սրբոյ էջմիածնի յաղագս դադարեցուցունելոյ հրատարակութիւն Հիւսիսափայլ ամսաթերթին»։

Նույն կապոցի շապիկին գրված է՝ «Սկսեալ 'ի 8 յուլիս 1861 ամի,
Աւարտեալ 'ի հոկտեմբերի ամսոյ
1862 ամի»։

Այս խնդրին հետագայում չվերադառնալու նպատակով նշենք, որ «Գործ»-ը մեծ ուշացումով է ձևավորվել։ Կապոցում հավաքված և ժամանակագրական կարգով դասավորված թղթերը, սկիզբ են առնում Մատթեոս կաթողիկոսի 1860 թ. մայիսի 29-ի գրած՝ հավատարիմ մնալ հայ եկեղեցու ավանդներին կոնդակով և վերջանում Դաբրիել վ. Այվազովսկու 18 նոյեմբերի 1861 թվականին՝ «չձանձրացնել հոգևոր կառավարությունը զանազան գրություններով», պատվերով։

1860 թվականի դեկտեմբերի 26-ին Հովսեփ Զաքարյան Չերքեզյանը «Բարձրագույն անվան» դիմում է գրում և երեք կետից բաղկացած մեղադրանք շարադրում։

Հովսեփ Չերքեզյանի դիմումից սկսվում է արշավանք «Հյուսիսափայլ»-ի դեմ։

Մեղադրող Հովսեփ Չերքեզյանը այսպես է ձևակերպում իր մտքերը.

ա) «Հյուսիսափայլ»—№ 10, էջեր 312—313 Ստ. Նազարյանցը արտահայտվել է «հակառակ ուղղափառ Հայաստանյայց սուրբ եկեղեցվո»։

բ) Ստ. Նազարյանցի «Վարդապետարան կրոնի» գրքում կա «Հայաստանյայց սուրբ եկեղեցվո յոթն խորհրդոց ընդդեմ» գաղափարախոսություն։

գ) «Խնդն արգելուլ սալ տպագրութիւն Հիւսիսափայլ անվանեալը»։

Սրա հետևանքը լինում է այն, որ կաթողիկոսը 1861 թվականի 29-ը հունվարի կոնդակով, թիվ 27, կարգադրում է.

«Յառաջարկեն իսպառ խափանել զտպագրութիւն Հիւսիսափայլ վնասաբեր օրագրի, որ 'ի լոյս ընծայի 'ի գայթակղութիւն ազգիս»...

Սակայն կաթողիկոսի կոնդակն իր վճռականությամբ դեռ բավական չէր, որ խափանվեր «Հյուսիսափայլ»-ը։ Հարկավոր էր կառավարության որոշում։

Այս խնդրով սկսում է զբաղվել Էջմիածնի սինոդը։

Երկու վարդապետի հանձնարարվում է ուսումնասիրել Ստ. Նազարյանցի գրական գործունեությունը՝ հակաեկեղեցական մտքեր գտնելու համար նրա

գործերում։ Հնարավորության սահմաններում նրանք կատարում են առաջադրանքը և ... հաստատում մեղադրանքը՝ Ստ. Նազարյանցի դեմ։

Էջմիածնի սինոդը անցնում է հարձակման։

Սինոդի գրությունը Կովկասի փոխարքային և նրա միջոցով ներքին գործոց մինիստրին հետևյալ երեք առաջարկությունն է պարունակում.

ա։ Փակել «Հյուսիսափայլ»-ի հրատարակությունը, իսկ կրոնի վերաբերյալ դրքերի հայերեն հրատարակության գրաքննությունը հանձնել կաթողիկոսին ու սինոդին։

բ) Հրամայել հոգևոր կառավարություններին՝ տեղական իշխանությունների միջոցով՝ բռնագրավել «Հյուսիսափայլ»-ի համար 10-րդ դիրքը, ինչպես և Ստ. Նազարյանցի տպագիր աշխատությունը։

գ) Սաստիկ հանդիմանություն» անել Մատթեոս արքեպիսկոպոսին այն բանի համար, որ նա 1853 թվականին թույլ է տվել Ստ. Նազարյանցի գրքի տպագրությունը, չգտնելով նրա մեջ որևէ մեղանչում հայ եկեղեցու դեմ։

Սինոդի վերոհիշյալ գրության մի օրինակը ուղարկվել է Մոսկվա՝ հայ հոգևոր կառավարության, որ անմիջապես կիրառվի հրամանը։

Արխիվում գտնված նյութերն ակնհայտնի կերպով ցույց են տալիս, որ Մոսկվայի հայ հոգևոր կառավարությունն իսկույն դիմել է քաղաքապետին և խնդրել, որ սինոդի որոշումը ի կատար ածվի։

1861 թ. օգոստոսի 17-ին Ստ. Նազարյանցին կանչում են ոստիկանատուն, պահանջում նրանից իր գրքի բոլոր օրինակները, «Հյուսիսափայլ»-ի բաժանորդների լրիվ ցուցակը, ինչպես և ամսագրի 1860 թվականի № 10-ի մնացած դրքերը։

Մենք ներքևում բերում ենք Ստ. Նազարյանցի բացատրությունը, որ նա դրել է ոստիկանատանը՝ ռուսերեն լեզվով։ Դրա բնագիրը ձեռագիր է, առանց ուղղումների և խմբագրական փոփոխությունների։

Մոսկվայի քաղաքապետը, ստանալով այդ «բացատրությունը» ոստիկանատնից, իր գրության հետ միասին ուղարկել է Մոսկվայի հոգևոր կառավարությանը։ Վերջինս, հայտնելով սինոդին իրենց անհաջողության մասին, հարց է տալիս.

—Սրանից հետո, երբ պ. քաղաքապետը օրինական գտավ Ստ. Նազարյանցի բացատրությունն ու անհիմն՝ սինոդի առաջարկը, ի՞նչ պետք է անել։

1861 թվականին սինոդին և նրա թիկունքին կանգնած մարդկանց չհաջողվեց «խափանել» «Հյուսիսափայլ»-ը։

Այս գործում մեզ հետաքրքրող հարցը Ստ. Նազարյանցի կշռված, տրամաբանորեն պատճառաբանված դիրքն ու պատասխանն է, որ «Բացատրություն» է կոչվում, և Էջմիածնի սինոդի պահանջները մերժում, որպես անհիմն ոտնձգություն։

ЕГО ВЫСОКОБЛАГОРОДИЮ ГОСПОДИНУ ЧАСТНОМУ ПРИСТАВУ СРЕТЕНСКОЙ ЧАСТИ

Профессора Лазаревского Института Восточных Языков, Статского Советника и кавалера, доктора Назарянца

ОБЪЯСНЕНИЕ

Вследствие Отношения к местному начальству московского Армяно-Григорьянского духовного правления от 7 сего августа, за № 41-м, от отобрании у меня экземпляров 1853 года изданной мною на армянском языке книги, как неправильно означается: «Учение веры» и 10 № издаваемого мною журнала «Северное сияние» на 1860 год, имею честь дать вашему высокоблагородию следующее объяснение:

Во-первых, изданное мною в 1853 году сочинение под заглавием **«Школа Религии»**, а не **«Учение веры»**, одобрено к напечатанию бывшим Нахичевано-Бессарабским, а ныне Астраханским епархальным начальником архиепископом Матеосом, при жизни патриарха и католикоса всех армян Нерсеса, который, равно как и Ечмиадзинский синод в упомянутой книге, целых пять лет, начиная с 1853 до 1857 годов и далее служившей руководством в руках ищущего христианского поучения армянского народа, не нашли ничего по своему направлению вредного для догматов христианской религии.

Книга эта была издана на иждивении армянских купцов Тамамшева, Акимова, и жительствующего в Москве, в Мясницкой части, в собственном доме, Ананова. По отпечатании, все экземпляры, числом 800, доставлены по последнему на распоряжение господ издателей.

Во-вторых, периодическое мое издание, «Северное сияние», выходя на общих правилах Устава о русской цензуре, подчиняется Санкт-Петербургскому Цензурному комитету, и все до настоящей поры обнародованные статьи в «Северном сиянии» допущены к печати с одобрения и за казенной печатью Цензурного комитета в Санкт-Петербурге, следственно и не могут подлежать контролю армянского духовенства.

Поэтому и отобрание у меня со стороны местного начальства экземпляров 10 № «Северного сияния» на 1860 год, оказывается неимеющим никакого законного основания, равно как и я не считаю себя обязанным дать сведения о подписчиках на журнал «Северное сияние».

Ечмиадзинскому синоду, если он в самом деле находит в означенном номере моего журнала какие нибудь места, противоречащие догматам христианской религии, остается снестись с Санкт-Петербургским Цензурным комитетом и просить открыть по этому делу законное исследование.

При сем прилагается 10 № периодического издания на 1860 год.

Профессор Лазаревского Института Восточных языков, Статский советник и кавалер, доктор **Назарянц**

17 августа 1861 года,
Москва.

Объяснение принял Квартальный надзиратель (подпись)[1].

[1] МОГИН, Фонд армянского духовного управления, опись № 1, дело 28.